



## Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐքԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՐԵՔՉՅԱՆ

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգ-  
ընտիր Տեղակալ ամենապատիվ Տ. Գևորգ  
առքեպիսկոպոս Զերեքչյանը ծնվել է 1869  
թ. գեկտեմբերի 2-ին Ռուսական Դանի վրա)

զրազվում էին փականագործի (ալեսար) արհեստով և իրենց ճակատի քրտինքով  
էին հայթայթում իրենց ու մեծ ընտանիքի ապրուստը:



Նախիջևան՝ բազմում, արհեստավորի հա-  
մեստ ընտանիքում:

Ինչպես նրա պապը, նույնպես և նրա  
հայր Խաչատուր Աբրահամի Զերեքչյանը

Մանուկ Զերեքչյանի հայրը երիտասար-  
դական հասակից հեշտութամբ ու սիրով  
յուրացրեց իր հոր՝ Աբրահամ Զերեքչյանի  
արհեստը և ընտանիքի հոգինը վեցըց

լուր վրա, որից հետո պապի գուրգուրանքի և փայտանքի միակ առարկան դարձավ փողիկ Գեղորգը՝ նա իր ամբողջ ուշադրությանը կենտրոնացրեց թոռնիկի դաստիարակության գործին:

Գեղորեցյանի մայրը Կատարին Մատթևոսի Չեղորեցյանը, որ բնիկ նախիշևանցի էր և սնված ու դաստիարակված հայ եկեղեցու և ժողովրդի ավանդական սովորությաններով, իր խոր ազդեցության կնիքը դրեց մանուկ Գեղորգի վրա նրա մանկական հասակից:

Մոր ժողովրդասիրությունը, կարուտյալ-սերին օգնելու և միմիթարերու գործնական քայլերը, հայ ժողովրդին նվիրված լինելը, կորնն ու եկեղեցին անսահմանորին սիրելը խոր տապալորություն թողեցին մանկան հոգեկան աշխարհի վրա:

Վեց տարեկան հասակից սկսած մանուկ Գեղորգը սկսում է զպրոց հաճախել Խնա տարեկան հասակում նա ավարտում է ու հաստիքամածին եկեղեցու ծիսական դպրոցը և ընդունվում է տեղական հոգեկոր սեմի-

նարիայի առաջին դասարանը:

Սակայն իրան հետաքրի և ուշագրավ է այս հանգամանքը, թե հասարակական ի՞նչպիսի մթնոլորտում մեծացավ ու սընդեց ապագա մեծ զօրծիչը, մեր եկեղեցու ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը:

Նոր նախիշևանի հայկական գաղութը կովկասի հանրածանոթ գաղութներից մեկն էր: Այն վաղուց ի վեր մեծ հոշակ էր ձեռք բերել իր հայրենասիրական և հանրոգուտ գործունեությամբ: Այստեղ ժողովրդական շահերի ճանաշողությունը առաջնահերթ խնդիրն էր համարվում և այդ պատճառով հայրենասիրական յորաքանչյուր գործ կամ նախաձեռնություն խոր արձագանք էր գործնում հայ համայնքի սրտում: Հայկական այս փոքրաթիվ գաղութը ժողովրդին, եկեղեցուն, բարեգործական և ուսումնական հաստատություններին տալիս էր իր առատ նյութական նվիրաբերությունները և գրեթե նախանդ էր շարժում Այդ պատճառուով մեր հասարական համարական կանոնը էր ամենուրեք լսելի: Տամանը ուժգին էր և ամենուրեք լսելի:

Այսպիսի մթնոլորտում կոփից մանուկ Գեղորգը և ժողովրդասիրական հակումները վարակեցին նրան՝ կանելով նրա պատանեկան կյանքի ողջ էռլիքունը:

Ս. Էջմիածնում շայոց հոգեկոր ճեմարանը բացվելուց ի վեր նախիշևանի հայ հա-

մայնքը այնտեղ մշտապես 5 թոշակառու ուսանող էր պահում, որոնց համար յուրաքանչյուր տարի վճարում էր 1.500 ռ. դրամ:

Ճեմարան էին գործուղիւում ծխական դպրոցն ավարտած ընդունակ երեխաները՝ հատուկ քննություն տալուց հետո միայն:

Եվ ահա Արքահամ Գեղորեցյանը միտք է հղանում իր թոռին տանել ճեմարան:

1880 թ. Գեղորեցյանն ընդունվում է ճեմարան և 1889 թվականին ավարտում է ճեմարանի լրիվ կամընթացը:

Նա գեռնս Յ-րդ լսարանից սկսում է ըզրազիւլ իր սիրած գործով ուսուցչությամբ, ճեմարանի վարժություն երաժշտության դասեր տալով, միաժամանակ զեկավարում է վանքի երգեցիկ խումբը:

Ավարտելով ճեմարանը 1889 թվականին Գարեգին Հովհանիս (ներկայում Տանն Կիլիկիոյ կաթողիկոս), Կարապետ Տեր-Մկրտչանի և ճեմարանի տեսուչ Արշակ Խահատյանի հետ ձեռնադրվում է սարկավագ:

Դրանք հոգեկոր կոչում ստացած առաջին ժիմեանակներն էին, որ ճեմարանը հապատակությամբ տալիս էր կյանքին:

Ընդունելով հոգեկոր կոչում՝ սարկավագ Գեղորեցյանը որոշում է տեղակիութել նախիշևան և կարունակել հայ ուսուցչի համար երգություններու մեջ ամենաական արդարացությունը: Սակայն ճեմարանի վարչության աշքից մի վրիպում ընդունակ սարկավագը և նա առաջարկ է ստանում մեկնել արտասահման բարձրագույն կրթություն ստանալու Այսպիսով նրա ուսանողական ժամանակաշրջանի իդեքր անակնակալ կերպով իրականանում են և նա մեկնուի է լայպցիդ:

Ճեմարանի վկայականով և առանց քըն-նության ընդունվելով լայպցիդի համալսարանը, նա հնաւում է երկու ֆակուլտետի առարկաներին՝ աստվածաբանական-փիլիսոփայականին և ապա մեկ տարի նախապատրաստվելոց հետո ընդունվում է լայպցիդի կոնսերվատորիան՝ որպես իսկական ուսանող:

Ավարտելով Լայպցիդի համալսարանը, նա 1894 թվականին վերապանում է Գեղորգյան ճեմարան որպես երաժշտության դասատու Մեկ տարի հետո, 1895 թ. տեղափոխվում է նախիշևան և տեղի հոգեկոր սեմինարիայում դասավանդում է երաժշտություն, եկեղեցական պատմություն և բարոյագիտություն:

1895 թ. մինչև 1913 թ. նա կրում է Հայուսուցիչ պատվավոր կոչումը՝ երաժշտության դասեր տալով Նախիջևանի Հայկական Կողյան իրական դպրոցում:

1913 թ. կաթողիկոսական գիվանից Բագրատ արքակի հակոպուսը հետագործ Հայուսում է սարկավագ Զերոբեցլանին՝ ներկայանալ Գեղորդ Ե. կաթողիկոսին:

Զերոբեցլանը մեկնելով կշմիածին, ներկայանում է Վեհափառակն Կաթողիկոսը հետևածու խոսքիորով է զիմում նրան. «Ձենք հերթափերել եմ որոշ առօդի համար, սակայն պարի խոսք տաք սասած կատարել, և եթե կիսուտանաք կատարել, նոր միայն կը հայտնեմ այնու։

Զերոբեցլանին իսկույն ըմբռնում է, թե կաթողիկոսը ինչ պիտի առաջարկի իրեն, «Այս օրը, երբ եմ թողեցի ճնշմարանը և վանք մտա, Հայոց Հայրապետին հավատարմություն ուխտեցի, հրամայեցեք, և ու տարմություն ուխտեցի, հրամայեցեք, կը կատարեմ», պատասխանում է Զերոբեցլանը։ Կաթողիկոսը շարունակում է. «Որոշել եմ քարդապետ ձեռնադրել և առաջնորդական փոխանորդ նշանակել նոր նախիջևանին. ասում էին, թե դուք ըստ հարմարությունները շեն թողնի ու շեն գաս»։

— Ինչ որ ասել են, այդ եղել է նոցահամոզմունքը, իսկ իմ համոզմունքը են Հայտարարեցի, — պատասխանում է սարկավագ Զերոբեցլանը։

Այսուհետեւ Զերոբեցլանը Հայտնում է Վեհափառին, թե ո՞րքան նպատակահարմար կինի առաջնորդական փոխանորդն ըշանակվել մի միջավայրում, որ ինքը երկար տարիներ եղել է քահանաներին ստորապետ սարկավագ։

— Նախօրդ ստացած տեղեկությունները Ձեր մասին այնքան դրական են, որ նա ամեննեին շեմ կասկածում, որ դուք պատվով կկատարեք Ձեր պաշտոնը թե Ձեզ համար և թե էջմիածին համար, — հայտնում է Գեղորդ Ե. Ը.

Եվ նոյն 1913 թ. ամառը, Հունիս ամսին Զերոբեցլանը ձեռնադրվում է վարդապետ ու ներքին գործերի նախարարի թուլլատվությունն ստանալով նոյս թվի նոյն մեքերին մեկնում է Նախիջևան և անցնում իր պարտականությունների կատարմանը։

Ստանձնելով իր նոր պաշտոնը, Գեղորդ վարդապետը ձեռնադրվում է կուզառ-կըրթական աշխատանքի. Առանձնապես զարկ տալով ծխական դպրոցներին, Հայոց լեզ-կան և Հաշվապահական ապարատները,

վոլ խոսելուն և Հայկական շունչն ու ոգին գաղութի Համալիքում վառ պահելում, Չեռնիբեցլանն զգալի շափով բարձրացնում է գաղութի Հայերի Հայրանապետությունը, նըրանց մեջ վառ պահելով Մայր Աթոռին, բարեգործական ընկերություններին, դպրոցական-կրթական հաստատություններին նյութապես և բարոյապես օգնելու ցանկությունը։

1916 թ. կաթողիկոսը նրան հրամայրում է Ս. էջմիածին, որպես սինոդի անդամ, միաժամանակ նշանակում է Ս. էջմիածինի և Երևանի եղբ. օգնության, ճյուղերի նախագահ։

Եղբ. օգնության այս ճյուղերը կազի ի կազի էին գրածում: Այդ հանգամանքը հայտնի էր Զերոբեցլանին:

Կաթողիկոսը այդ ժամանակ գտնվում էր Թրիլիսիում Զերոբեցլանը ներկայանալով նրան, իրավելի է լինում իր նոր պաշտոնների հետ կազմական գործադրություններին: Նա անհամեշտ է համարում տեղն ու տեղը եղբ. օգնության կենտրոնական կազմակերպության մեջ Թրիլիսիում հանգամանքը ուսումնասիրել գործի համար պահանջվող պայմանները Մանութանալով գործերի ընթացքին, նա տեսնում է, որ միերքների աշխանք ի վեր տրված պատվերները շեն կատարվել, թեև բոլոր պատվերների դրամները վճարված են եղել և ոչ միայն այդ, այլև ոչ ոք նախանձախնդիր ու հետամուտ չի եղել պատվերներն ստանալու Ամեն ինչ թույնված էր պատահականության։

Զերոբեցլանը կարևոր է համարում նաև և առաջ լուծել այս կնճիռը: Եվ նրան հաջողված է. թ. պարենի ու միերքների հոսանքը շուրջ է տալիս զեպի էջմիածինի ու Երևան: Գաղթուկանությունը ցնծում է այս առատությունը տեսնելով։

Այսուեղ արդեն ակնհայտ կերպով փայլում է նրա կազմակերպական և խնալուղական ընդունակությունը: Նա կրծառում է վերաբեր ծախսեր, եկած ապրանքը կայարաններից խոկույն դուրս է գրել տալիս, տեղափոխության միջոցները կարգավորում է ըստ հարկին և ալգավառվ կարողանում է տնտեսել և ժողովրդին արժան պարեն մատակարարել:

Գալով էջմիածին, իրեն հասուկ համառությունը նվիրվում է աշխատանքը կազմակերպելուն և այն լուրջ հիմքերի վրա դնելուն: Նախ կազմակերպում է մարզական հայությունը և Հաշվապահական ապարատները,

անց է կացնում գաղթականների ցուցակագրություն՝ տալով ամեն մի ընտանիքին նըպաստի գրբույներ:

Ակնառու տեղ է գրավում նրա այս ժամանակաշրջանի՝ գործունեության մեջ որրերի վերաբերմամբ տարված խնամքը: Որբերի թիվը նրա օրով 125-ից բարձրանում է 800-ի, որքան ցները կանոնավոր կերպով կանգնավորվում են, որբերը մաքոր և կոկիկ հանդերձավորվում: Նշանակվում են կըրթված վարիչներ և դաստիարակներ:

Մինչ այդ՝ բարձի թողի արված զպրոցական գործը վերազարթնում է: Զերբեցանը անհուն եռանդով նվիրված է գաղթականության զպրոցների բացմանը, զպրոցների կահավորում է համապատասխան սարքավորումներով, հրավիրում է պատրաստված ուսուցիչներ, և մինչ այդ անգործագրելի մնացած զպրոցական գումարները լիովին գործադրում է որբերի կրթական գործի վրա:

Սակայն այս բոլորի համար Զերբեքչանը վճարում է իր կյանքը՝ ժամը 9-ից մինչև 6-7-ը անդամար աշխատելով, հյուծվում է, որընում առողջությունը և հարկագործված է լինում 2 ամսով արձակուրդ խընդրել:

Գաղթականները և որբերը արցունություն բաժանվում իրենց խնամող հայրական ձեռքից:

Դեկտեմբերի 1. կաթողիկոսը գնահատելով հանդուն և անձնվեր վարդապետի գործունեությանը, 1917 թվին եպիսկոպոս է ձեռնադրություն:

Քիչ կազդրվելով, Գեվորգ սրբազնը վերապանում է Ս. էջմիածին: Այստեղ ժամանության կողմից ընտրված է Կանական կառավարության նախագահ և Մայր Տաճարի Լուսարարապետ:

1921 թ. Գեվորգ սրբազնը որպես կաթողիկոսի ներկայացուցիչ մեկնում է Թիֆլիսի Վրաստանի թեմի եկեղեցական գործը կարգավորելու: 1922-ին գումարված թեմական պատգամավորական ժողովը նորան միաձան ընտրում է թեմի առաջնորդ 1925-ին նա նորից վերընտրվում է և միայն 1926 թ. գրաժանական վերաբանում է Ս. էջմիածին: 1927 թ. ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ: 1928 թ. Գերագույն Խորհրդի և կաթողիկոսի կարգադրությամբ գործուղվում է Թիֆլիսի՝ այնտեղ ծայր առած ազատ եկեղեցական շարժումը դադարեցնելու:

Թեմի նախկին առաջնորդի անունը բա-

վական էր, որ այդ շարժումը դադարեց: Զերբեցանը հաջողում է օրինական միջնորդով ազատ եկեղեցականներից վերցնել եկեղեցիները: Կաթողիկոսը գործունակությամբ է ողջունում նրա հաղթանակը:

Այս պայմանը մեջ ժողովուասեր գործիշը հարապարակ է գալիս ընտրական սկզբունքի և ժողովուի իրավունքի պաշտպանության շատագով:

1923 թ. նա գործուղվում է Հյուսիսային Կովկասի հայկական եկեղեցական գործերը կարգավորելու: Այստեղ ևս բարեխոզորին կատարելով իրեն հանձնարարված աշխատանքը, վերազանում է Ս. էջմիածինի և մում ամստեղ մինչև 1932 թ., երբ տեղի է ունենություն կաթողիկոսական ընտրություն: Ազգային-եկեղեցական ժողովը նրան ընտրում է Գերագույն Խորհրդի անդամ և նա մում է այդ պաշտոնում մինչև 1938 թ.:

Նույն թվի ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը

կաթողիկոսը վախճանվում է: Այդ ժամանակ Զերբեցանը Ս. էջմիածինից բացայնում էր: Նա մարտի վերջերին մեկնել էր Հենինական, Թիֆլիսի՝ որոշ հանձնարարություններով:

Թիֆլիսից Ս. էջմիածին վերադառնալով, նա ստանում է հանգուցյալ կաթողիկոսի կողմից նախօրոք պատրաստված կոնդակը, որով նա նշանակված էր Ամենայն Հայոց Հայրապետական Տեղակալ:

Զերբեցանը Հոգևոր Խորհրդի անդամների հետ շարումակում է Մայր Աթոռի պահպանման գործը մինչև 1941 թվականը:

1941 թ. գումարված Ազգային եկեղեցական ժողովը եպիսկոպոսների թվի պահպանության և արտասահմանից ժամանած պատգամավորների ող բարպարագ քանակի պատճենով կաթողիկոսական ընտրություն չի կատարված և հետաձգում է Այս ժողովը Գեվորգ սրբազնին ընտրում է Ամենայն Հայոց Հայրապետության Տեղակալ:

Այս օրից սկսվում է Մայր Աթոռի և Հայեկեղեցու պատմագրության նոր շրջանը, միշտ շրջան, որ Գեվորգ սրբազնի բազմավասակ և ալեները գլուխը օծում է անջնջելի հավերժական փառքով:

Նա բարեխոզորն և ամենայն գիտակցությամբ տանում է իրեն վեճակված պատմական մեծ գործը և խանդակառությամբ լծվում է Մայր Աթոռը պահպանելու և բարեկարգելու աշխատանքներին:

Զնայած իր տարիքին, նրան տեսնում են աշխատանքի բոլոր բնագավառներում: Ահա նա գրամեքենայի առաջ տպում է, հիսու-

խոսի կողքին կանգնած պատասխանում է ստացված գրադրությունների պատասխանները, թիվ հետո կոնդակ է շարադրում, պաշտոնական ընդունելություններ կատարում, այցելուներին բավարարում և ճանապարհում: Այս բոլորը նրա աշխատանքի թեթև ժաման ևս կազմում: Եվ ճանկարծ նրան կամանքը միաբանների սենյակներում, տաճարի խորաններում, թանգարաններում, նոյնիսկ սպահակի մոտ: Նա սիրում է ամեն ինչ անձամբ սոսուկե, ճանաչել բոլորին, գիտանալ նրանց հոգերն ու կարիքները: Եվ մինչև առ անձամբ չի ստուգում, չի ճանգտանում: Այդպիսի Քեվորդ սրբազնութ:

Ճաճախ մտածում եմ, թե ե՞րբ է ճանդրստանում նաև Ժամը 2-ից մինչև 6-ը Ընդամենը 4 ժամ: Խոկ այդ որքան թիւ է տարիքամուր մարդու համար:

Սակայն նա չի սիրում ճանգտանալը նա սիրում է աշխատել մեղմի նման, մրջումի պիս: Աշխատում է և աշխատեցնում: Միրում է, որ բոլորն անխտիր աշխատեն իրեն պիս և այդ ավունը սրսկում է բոլորին, վարակում ամենցին:

Ծնորժիվ այս աշխատանքի է, որ այսօր Մայր Աթոռով ծաղկած վիճակի մեջ է, ունի գործարար և համերաշխի միաբանություն, նոր միաբանություն, Չեռքբայանի հոգով դաստիարակված, նրա սկզբունքներին հիտեւող միաբանություն: Այդ աշխատանքով պիտի բացատրի ութացցուցին, ոչչմշտիճնա ամսագրի հրատարակությունները, Շեմարանի բացումը, նորոգությունները, գրադարանի կարգավորումը, վանքի շրջապատի կանաչազարդումը և այլն:

Բոլորին մեղմ ժպառով զիմավորող, զատիքարեղող և հոգեպես բարձրացնող այդ մեծ եկեղեցականը անհունորդի լցված է մարդուն ճանաչելու, նրան օգնելու, բարձրացնելու անհունական ընդունակություններով:

Բարկանալ և ճանդիմանել նա չգիտե, Եվ ինչու այդ անել: Չէ՞ որ նա ունի ամելի լավ մեթոդ, որը սուր է, կարուկ և գնուական: Ժամատակ կես կատակի, կես ճանդիմանության ձևով՝ նա մարդուն զգալ է տա-

լիս յուր թերությունները և ալդ անում է այնպիսի նրբությամբ, որ ճնաճարլի երկար ժամանակ չես կարողանում որոշել՝ հրավիր կատակ էր անում, թէ իրոք ճանդիմանում էր: Սակայն աշխատմենայինիվ բանցքներդ ճափարում ես, զգաւշանում և ուղարկում սխաններդ:

Ժողովրդասիրություն ու հայրենասիրությունը ցայտում կերպով գրանցարկել են Դեկոր սրբազնի յուրաքանչյուր գործի սրացի մեջ: Հայրենիքի բարօրությունը նրա համար ամեն գործից բարձր է և վերադասիի: Այդ են վկասում Շատունցի Դավիթուանկացին շարասյան նախաձեռնությունը Սրբազն որոք կողմից: Մեր Հայրենիքի համար զոյվանների ընտանիքներին և երեխաններին օգնելու նրա կոնդակները: Խնչպիս հայտնի է, Քեվորդ սրբազնի հայրենասիրուական ոգեշունչ կոչերը լայն արձագանք գտնում արտասահմանում և մեր երկրում գտնվող հայ հոգևորականության և հավատացայլների մեջ: Սփյուռքի հայության և մեր երկրի հոգևորականության և հայ հավատացայլների միջաներով կառուցվեց տանկացին շարասյանը և մեկնեց ճակատ: Այսպիսով իրականացավ Տ. Գեվորդ Սրբազնի ցանկությունը՝ ի կատար ածել Հայրենիքի հանգիւ ունեցած իր սրբազն պատրականությունը: Սակայն ինչ որ արվել է, Տ. Գեվորդ Սրբազնը այդ շատ թիւ և համարում: Նա խորհում է և մտմտում է Հայրենիքին գնելու, պատերազմի հնտեղաբուռ առաջացած նրա վերքերը բուժելու որ մեթոդներ ու ծրագրեր:

Մ. եղբաժին և Հայրենիք, ահա Տ. Գեվորդ Սրբազնի սրբություն սրբոցը, նա այլ սրբություն չի ճանաչում:

Մ. եղմանի միաբանության և հայ հավատացայլների ցանկությունն ու համոզմունքն է, որ առաջիկա Համազգային ժողովը իր բազմավաստակ ու հայրենասիր զավակին, ականավոր եկեղեցական Տ. Գեվորդ Սրբազն արքեպիսկոպոսին կվստահանա Ա. Գրիգոր Լուսավորչի զաւը՝ ընտրելով Ամենայն Հայոց Կաթողիկոս:

